Յարոսլավա Պուլինովիչ

Յարոսլավա Պուլինովիչ – դրամատուրգ, սցենարիստ:

Ծնվել է Օմսկում՝ լրագրողների ընտանիքում: 2009 թվականին ավարտել է Եկատերինբուրգի թատերական ինստիտուտը:

Արժանացել է «Գոլոս պոկոլենիա» («Սերնդի ձայն»), «Դեբյուտ», «Եվրասիա», «Նովայա պիեսա», «Արլեկին», «Տեքստուրա», «Պարտք: Պատիվ: Արժանապատվություն» մրցանակների, ինչպես նաև դարձել է Բաժովի անվան մրցանակի դափնեկիր «Մաստեր: Պրոզա» անվանակարգում («Հաղթեցի ես», 2018) պիեսների ժողովածուի համար: Մի շարք միջազգային թատերական փառատոներում մրցույթների հաղթող է ճանաչվել:

Սցենարներ է գրել հետևյալ ֆիլմերի համար՝ «Թռչունը» («Լենֆիլմ», 2016), «Ինչպես ես դարձա» («Կարո», 2018), «Վերա» («Գորկու անվան կինոստուդիա», 2023) և այլն: 2024 թվականին «Ելենա Շուբինայի խմբագրություն»-ում լույս է տեսել «Էլզայի երկիրը: Պիեսներ: Մենախոսություններ» ժողովածուն:

Յարոսլավա Պուլինովիչի պիեսներով ներկայացումներ են բեմադրված Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Եկատերինբուրգի և ռուսաստանյան այլ քաղաքների թատրոններում, ինչպես նաև արտասահմանում: Մի շարք ստեղծագործություններ էկրանավորվել են:

«Էլզայի երկիրը» ֆիլմը բազմաթիվ մրցանակների է արժանացել, որոնց շարքում՝ «Ռոսիյսկայա Գազետայի» մրցանակը՝ ժամանակակից հայրենասիրական կինոյի «Մալայա զեմլյա» (Նովոռոսիյսկ, 2020) փառատոնում: «Աշխարհը ճանաչող մարդը» ֆիլմը (Կերչ, 2020) վաստակել է հանդիսատեսի համակրանքի մրցանակը՝ Համառուսաստանյան կինոփառատոնում՝ նվիրված ազգամիջյան համերաշխության ամրապնդմանը, իսկ ՀԼՄ-ների մրցանակը՝ «Պրովինցիալնայա Ռոսիյա» («Գավառների Ռուսաստան») փառատոնում ««Ոսկյա տարիքի» սիրո թեմային նրբանկատ մոտեցման համար» անվանակարգում (Յեյսկ, 2021):

«Մերիդիանի Տիխովո» XIX-րդ կինոփառատոնի ժամանակ «Ժաննա» ֆիլմը (2022), որ ստեղծվել է Յարոսլավա Պուլիչիչի համանուն պիեսի հիման վրա, արժանացել է հանդիսատեսի համակրանքի մրցանակին՝ որպես լավագույն ռուսական ֆիլմ: 2023 թվականին ընդգրկված է եղել «Ոսկե արծիվ» կինոփառատոնի (2023) մեծ ցանկում՝ «Լավագույն խաղարկային ֆիլմ» անվանակարգում:

Մասնակցել է գրքի միջազգային փառատոներին Ֆրանկֆուրտում (2019), Մինսկում (2023), Պեկինում (2024) և այլն: 2019 թվականին եղել է «Ոսկե դիմակ» փառատոնի մրցութային հանձնաժողովի կազմում:

«Ժաննա» պիեսն ընդգրկված է «Արդի ռուսական դրամատուրգիա: Մաս 2» անթոլոգիայում, որը 2018 թվականին հրատարակվել է China International Radio Press հրատարակչությունում:

READ RUSSIA

YEREVAN BOOK FEST 2025

КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ
КНИГИ ИЗ РОССИИ

ИНСТИТУТ ПЕРЕВОДА
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ